

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2015թ. սեպտեմբերի 2-ի

նիստի /արձ.1/

1. 2015-2016 ուս. տարվա ընդունելության արդյունքների վերաբերյալ ԸՀ պատասխանատու քարտուղար Ա. Հարությունյանի զեկույցն ընդունել ի գիտություն,

1.1 2015-2016 ուս. տարվա ընդունելության քննությունների ընթացքը համարել բավարար,

1.2 Ինստիտուտում ուսուցանվող մասնագիտությունների ընդունելության ծրագրերը բարեփոխելու, նախապատրաստական բաժնում դասավանդման գործընթացը նոր ծրագրերին համահունչ վերակառուցելու նախագիծ մշակելու նպատակով`

1.2.1 կազմել հանձնախումբ հետևյալ կազմով.

- Ն. Սարգսյան – պրոռեկտոր /նախագահ/

- Ա. Երզինկյան – դեկան

- Է. Հեքեքյան – դեկան

- Ա. Հարությունյան – դեկան

- Հ. Գասպարյան – ռեկտորի խորհրդական

- Ռ. Բաբայան – ամբիոնի վարիչ

- Ռ. Մարուխյան – նախապատրաստական բաժնի վարիչ

1.2.2 հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին մինչև ս.թ. սեպտեմբերի 10-ը ֆակուլտետների դեկաններին ներկայացնել ինստիտուտի ընդունելության ծրագրերի բարեփոխման վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկները:

2. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ս.թ. հուլիսի 8-ին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում կայացել է «Թատերական արվեստ» մասնագիտության հայցորդ Ն. Բերոյանի թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը, գիտական ղեկավար` դոկտոր-պրոֆեսոր Հ. Հովհաննիսյանի գրավոր դրական

եզրակացության առկայության դեպքում Ն. Բերոյանի հայցորդությունը և հետազոտողի կրթական ծրագրով հետագա ուսումնառությունը դադարեցնել:

3. Ինստիտուտի ուսումնական ստորաբաժանումների աշխատանքները համակարգելու նպատակով հաստատել և ս.թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ դնել՝

3.1 ԵԹԿՊԻ-ի Թատրոնի ֆակուլտետի կանոնադրությունը,

3.2 ԵԹԿՊ-ի Թատրոնի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը,

3.3 ԵԹԿՊ-ի Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի կանոնադրությունը,

3.4 ԵԹԿՊ-ի Կինոյի, հեռուստատեսության և անիմացիայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը,

3.5 ԵԹԿՊ-ի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի կանոնադրությունը,

3.6 ԵԹԿՊ-ի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը,

3.7 Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի կանոնադրությունը,

3.8 Խորեոգրաֆիայի ամբիոնի կանոնադրությունը,

3.9 Բեմական շարժման և մեներգի ամբիոնի կանոնադրությունը:

4. Հաստատել ԵԹԿՊԻ-ի հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2015-2016 ուս. տարվա ընդունելության կանոնակարգը,

4.1 կանոնակարգի երկրորդ կետով նախատեսված ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկել նաև միջբուհական, միջազգային համագործակցության և բարեփոխումների գծով պրոռեկտորին:

5. Բակալավրի կրթական ծրագրով «Դերասանական արվեստ» և «Ռեժիսուրա» մասնագիտությունների ուսումնական պլաններում մասնակի փոփոխություն կատարելու վերաբերյալ ներկայացված նախագիծը մերժել,

5.1 հանձնարարել ինստիտուտի մեթոդ խորհրդին սույն նախագիծը համակողմանի քննարկել, լրամշակել և ավարտուն տեսքով ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան